ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2021
02.2021
03.2021
04.2021
05.2021
Մայիս
06.2021
07.2021
08.2021
09.2021
10.2021
11.2021
12.2021

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 28-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2021

Մայիս

թիվ 5 (273)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՊՐՈՖՖԻՆԱՆՍ» ՓԲԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Ֆիդելիթի իրավական խումբ» ՍՊԸ գրավատան լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՄԱԿԱՐՅԱՆ 1» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» լուծարվող ՈՒՎԿ ՓԲԸ «Նոր Նորք» մասնաճյուղը, «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղը գրանցումից հանելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ «ԴԵՄԻՐՃՅԱՆ» մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ «Մալաթիա» մասնաճյուղը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 62Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 48-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 53-Ն որոշումը ««Դրամական միջոցների փոխանցման հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգը» կանոնակարգ 19.1-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 54-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 55-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 56-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

46 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՊՐՈՖՖԻՆԱՆՍ» փակ բաժնետիրական ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 64Ա):
- ***Դադարեցվել է*** «Ֆիդելիթի իրավական խումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան լիցենզիայի գործողությունը (որոշում թիվ 66Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՄԱԿԱՐՅԱՆ 1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 74Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» լուծարվող ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Նոր Նորք» մասնաճյուղը, «ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/251Ա, 1/275Ա):
- ***Գրանցվել է*** «ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Մալաթիա» մասնաճյուղը (որոշում թիվ 1/299Ա):
- ***Թույլատրվել է*** «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «ԴԵՄԻՐՃՅԱՆ» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/260Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/257Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թ. մայիսի 4-ի թիվ 62Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 7.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ 4.5%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը, 47-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի ««Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 104-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված հավելվածի Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը, Ձև 4-ը և Ձև 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

3. Սույն Որոշման պաշտոնական հրապարակումից հետո շահագրգիռ կողմերը պետք է ապահովեն Որոշմամբ կատարված փոփոխությունների Ծրագրային ապահովման աշխատանքները՝ մինչև սույն Որոշման ուժի մեջ մտնելը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 ապրիլի 2021 թ., Ն 48-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. ապրիլի 27-ին (ՀՀԳՏ, 03.05.2021):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2021 թվականի ապրիլի 27-ի
թիվ 48-Ն որոշմամբ

Ձև 1

Հաղորդագրություն թիվ _____
(ունիկալ համար)

ՈՐՈՇՈՒՄ ____

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

____ _____ 20 թ. ք. _____

ՀԿԱԾ _____ բաժնի _____ /բաժանմունքի/

_____ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

20 թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը, կատարողական մակագրության թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջը)

_____
_____
_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ _____
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

ընդհանուր գումարով դրամական միջոցների չափով

1.1. դրամական միջոցների_____%-ի չափով*

* *Եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*

1.2 _____ բանկային հաշվի (հաշիվների) վրա
(նշվում է բանկային հաշվի համարը)
առկա դրամական միջոցների ____%-ի չափով

արգելանք դնել պարտապան

_____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, գտնվելու վայրի հասցեն)

_____ -ի բանկային հաշիվներում՝ ըստ հերթականության, ըստ տեսակի*** առկա և դեռևս չարգելադրված դրամական միջոցների վրա,

որից _____ _____
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

դրամական միջոցները որպես կատարողական թերթով, անբողոքարկելի դարձած վարչական ակտով և կատարողական մակագրության թերթով նախատեսված գումար և

_____ _____ դրամական միջոցները՝ որպես կատարողական ծախսեր:
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

2. Բանկի անվանումը _____

Պարտապանի ընթացիկ բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում արգելանք դնել պարտապանի, ավանդներում, այլ բանկային հաշիվներում՝ ըստ հերթականության, ինչպես նաև մետաղական հաշիվներում առկա և դեռևս չարգելադրված դրամական միջոցների վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը:

3. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ և դրանց մուտքագրել _____ հաշվի (նշվում է բանկային հաշվի համարները) համար(ներ)ից ստացված և արգելադրված, ինչպես նաև հետագայում ստացվող միջոցները, ինչպես նաև պետական աջակցության հատուկ հաշիվներից (որոնք արգելադրման ենթակա չեն) ստացված կամ հետագայում ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման, ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

4. Տեղեկացնել պարտապանի ընթացիկ բանկային հաշվին կամ ավանդներին (ներառյալ՝ նոր բացված) հետագայում մուտքագրվող դրամական միջոցների (բացառությամբ սույն որոշման 3-րդ կետով նախա-

տեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների), ինչպես նաև արգելանքից ազատվող այն դրամական միջոցների մասին, որոնք արգելադրված են եղել արգելանք դնելու մասին այլ որոշում(ներ)ով (նշելով գումարի չափը), և արգելանք դնել դրանց վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը: Մուտքագրվող միջոցները ենթակա են արգելադրման_____:**

(այո, ոչ)

***«Այո» չի կարող նշվել, եթե 1-ին կետում նշվել է դրամական միջոցների %-ի չափ:*

**** «Ըստ տեսակի» դեպքում բանկը պետք է նշում կատարի տվյալ հաշվի տեսակի մասին, սակայն չպետք է հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն փոխանցի: Առկա դրամական միջոցները գրավադրված լինելու դեպքում՝ բանկը պետք է նշում կատարի նաև այդ մասին:*

5. Ծառայությունից արգելանք կիրառելու մասին որոշում ստանալու դեպքում բանկն արգելանքը կիրառում է ստորև նշված հերթականությամբ (նախորդ հերթի հաշիվներում դրամական միջոցներ չունենալու կամ նման հաշիվներում պարտավորության չափով մնացորդ չունենալու պարագայում՝ բանկը հաջորդ հերթում առկա դրամական միջոցներն արգելադրում է պարտավորության չափը չբավարարող մասով).

- **Ընթացիկ** բանկային հաշիվներում՝ բացառությամբ ընթացիկ բանկային հաշիվների, որոնց կցված է քարտ և/կամ հանդիսանում է ավանդային հաշիվ, **ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները,
- **Ընթացիկ** բանկային հաշիվներում՝ բացառությամբ ընթացիկ բանկային հաշիվների, որոնց կցված է քարտ և/կամ հանդիսանում է ավանդային հաշիվ, **արտարժույթով** առկա դրամական միջոցները,
- **Ընթացիկ** բանկային հաշիվներում, որոնց կցված է քարտ (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օվերդրաֆտ և բացակայում է դրական մնացորդ), **ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները,
- **Ընթացիկ** բանկային հաշիվներում, որոնց կցված է քարտ (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օվերդրաֆտ և բացակայում է դրական մնացորդ), **արտարժույթով** առկա դրամական միջոցները,
- **Ավանդներում ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները,
- **Ավանդներում արտարժույթով** առկա դրամական միջոցները,
- **Մետաղական հաշիվներ**:

Արտարժութային միջոցների արգելանքի դեպքում արգելադրվում է տվյալ հաշվի արժույթով:

5.1. Սույն որոշումը ստանալուց հետո բանկը պարտավոր է առավելագույնը 4 աշխատանքային օրվա ընթացքում կատարել որոշման պահանջները և ուղարկել պատասխան հաղորդագրություն:

6. Մինչև արգելանք դնելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

7. Նախկինում միևնույն անձի վերաբերյալ միևնույն կատարողական վարույթի համարով կայացված որոշումները ուժը կորցրած են ճանաչվում սույն որոշման ստացման պահից:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին, բանկին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

ՈՐՈՇՈՒՄ ___

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

____ _____ 20 թ. ք. _____

ՀԿԱԾ _____ բաժնի _____ /բաժանմունքի/

_____ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

20 թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը, կատարողական մակագրության թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջը)

_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ _____ ՀՀ դրամ ընդհանուր գումարի
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արգելադրված միջոցի տեսակ**)*
չափով (այդ թվում**),

1.1 դրամական միջոցների** _____%-ի չափով*

** Եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*
*** Եթե բռնագանձվում են տարբեր տեսակի արգելադրված միջոցներ՝ պետք է ավելացվեն տողեր՝ նշելով ավելացված տողում բռնագանձման ենթակա միջոցի տեսակը, գումարի չափը, արժույթը (կամ %-ը):*

1.2 _____ բանկային հաշվի (հաշիվների)** վրա
(նշվում է բանկային հաշվի համարը)
դրամական միջոցների _____%-ի չափով բռնագանձում տարածել պարտապան՝

_____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, գտնվելու վայրի հասցեն)

_____-ի՝ թիվ _____ հաղորդագրությամբ արգելադրված դրամական միջոցների, ինչպես նաև ընթացիկ բանկային հաշիվներում և ավանդներում

(որոնցում առկա դրամական միջոցները չեն հանդիսանում գրավի առարկա՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի) առկա և մինչև սույն կատարողական վարույթը չարգելադրված, ինչպես նաև հետագայում մուտքագրվող (ներառյալ՝ նոր բացված հաշիվներին կամ ավանդներին) դրամական միջոցների (բացառությամբ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների) վրա, որից

_____ _____ ՀՀ դրամը որպես կատարողական թերթով
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*
նախատեսված՝ բռնագանձման ենթակա գումար և

_____ _____ ՀՀ դրամը՝ որպես կատարողական ծախսեր:
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

2. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ և դրանց մուտքագրել _____ հաշվի (նշվում է բանկային հաշվի համարները) համար(ներ)ից ստացված և արգելադրված, ինչպես նաև հետագայում ստացվող միջոցները, ինչպես նաև պետական աջակցության հատուկ հաշիվներից (որոնք արգելադրման ենթակա չեն) ստացված կամ հետագայում ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման, ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

3. Բանկի անվանումը _____
սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական միջոցները փոխանցել _____ գանձապետական բաժանմունքի ՀԿԱԾ _____ բաժնի _____ հաշվին:

4. Եթե սույն կատարողական վարույթի հետ կապված՝ բանկում կան պարտապանի արգելադրված միջոցներ, ապա սույն որոշման 1-ին կետով նախատեսված ընդհանուր գումարը բռնագանձելուց հետո _____ ազատել արգելանքից:
(նշվում է գումարի չափը)

5. Պարտապանի տվյալներում, հաղորդագրության մեջ նշված այլ տվյալներում անճշտություններ հայտնաբերելու, արգելադրման հաղորդագրությունը նախապես ստացած չլինելու դեպքում անհապաղ հայտնել ՀԿԱԾ-ին: Մինչև բռնագանձում տարածելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

6. Նախկինում միևնույն անձի վերաբերյալ միևնույն կատարողական վարույթի համարով կայացված որոշումները ուժը կորցրած են ճանաչվում սույն որոշման ստացման պահից:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին, բանկին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

7. Յուրաքանչյուր բանկին ուղարկվում է միայն այդ բանկում արգելադրված միջոցների բռնագանձման մասին:

Հարկադիր կատարող _____ _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Ձև 3

Հաղորդագրություն թիվ _____

ՈՐՈՇՈՒՄ ___

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բանկի անվանումը _____ ՀԿԱԾ ծառայության _____բաժնի_____ /բաժանմունքի/ _____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

20 թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի հետ կապված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը, կատարողական մակագրության թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջը և արգելանքը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու հիմքը)

_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով _____ և/կամ 44.1-րդ հոդվածի կետով՝

ՈՐՈՇԵՑԻ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՐԳԵԼԱՆՔԸ

Պարտապան՝_____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն)

_____ թիվ

հաղորդագրությամբ արգելադրված միջոցների _____ այդ թվում՝

(մասնակի/ամբողջությամբ)

_____	_____	_____	_____
(գումարը թվերով)	*(գումարը տառերով)*	*(արգելադրված միջոցի տեսակ)*	*(արժույթը)**
_____	_____	_____	_____
(գումարը թվերով)	*(գումարը տառերով)*	*(արգելադրված միջոցի տեսակ)*	*(արժույթը)**

Մետաղական հաշիվներում առկա միջոցներ՝

_____	_____	_____	_____
(գումարը թվերով)	*(գումարը տառերով)*	*(արգելադրված միջոցի տեսակ)*	*(Հարգը և կշիռը)*

_____

(Մետաղի տեսակը և գինը)

Գումարը լրացնելու նպատակով պարտապանի հաշիվների վրա հետագայում մուտքագրված դրամական միջոցներից, որոնց վրա արգելանք է դրվել

_____

(արգելանքը վերացնել)

** Տարբեր արժույթներով արգելադրման դեպքում ավելացվում են փողեր և նշված տեսքով լրացվում բոլոր արժույթների համար:*

Որոշման պատճենն ուղարկել կողմերին, բանկին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Յուրաքանչյուր բանկին ուղարկվում է միայն այդ բանկում արգելադրված միջոցները արգելանքից ազատելու մասին:

Հարկադիր կատարող _____ _____

(անուն, ազգանուն) *(սփորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

Ի պատասխան թիվ _____ հաղորդագրության

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի անվանումը _____, ի կատարումն ՀԿԱԾ _____ բաժնի _____/բաժանմունքի/ _____-ի

(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ, կատարողական մակագրության թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

հիման վրա «____» _____ 20 թ. հարուցված թիվ _____կատարողական վարույթով կայացված որոշման/հաղորդագրության, հայտնում ենք, որ

«____» _____ 20 թ. դրությամբ

Պահանջվում էր արգելադրել

_____ _____ _____ ընդհանուր գումարով դրամական միջոցներ

(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

դրամական միջոցների _____%-ի չափով* դրամական միջոցներ

** Եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*

_____ բանկային հաշվի (հաշիվների) վրա

(նշվում է բանկային հաշվի համարը)

դրամական միջոցների _____%-ի չափով:

Պարտապան՝_____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն)

_____«____»

_____ 20 թ. դրությամբ

ԱՐԳԵԼԱԴՐՎԵԼ Է

_____ _____ _____ ընդհանուր գումարով

(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

դրամական միջոցներ, որից

_____	_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**	*(արգելադրված միջոցի տեսակ)***
_____	_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**	*(արգելադրված միջոցի տեսակ)***

Մետաղական հաշիվներում առկա միջոցներ

_____	_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(հարգը և կշիռը)*	*(արգելադրված միջոցի տեսակ)***

(Մետաղի տեսակը և գինը)

Պարտապանի սույն միջոցները (ստորև նշված) գրավադրված են (կոդ՝ P)

_____	_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**	*(արգելադրված միջոցի տեսակ)***

** Տարբեր արժույթներով արգելադրման դեպքում ավելացվում են տողեր և նշված տեսքով լրացվում է բոլոր արժույթների համար:*

*** Արգելադրված միջոցի տեսակի վերաբերյալ բանկը պետք է դրանք կոդավորի (a՝ **Ընթացիկ** բանկային հաշիվներում՝ բացառությամբ ընթացիկ բանկային հաշիվների, որոնց կցված է քարտ և/կամ հանդիսանում է ավանդային հաշիվ, **ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները, b՝ **Ընթացիկ** բանկային հաշիվներում՝ բացառությամբ ընթացիկ բանկային հաշիվների, որոնց կցված է քարտ և/կամ հանդիսանում է ավանդային հաշիվ, **արտարժույթով** առկա դրամական միջոցները, c՝ **Ընթացիկ** բանկային հաշիվներում, որոնց կցված է քարտ (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օվերդրաֆտ և բացակայում է դրական մնացորդ), **ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները, d՝ **Ընթացիկ** բանկային հաշիվներում, որոնց կցված է քարտ (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օվերդրաֆտ և բացակայում է դրական մնացորդ), **արտարժույթով** առկա դրամական միջոցները, e՝ **ավանդներում ՀՀ դրամով** առկա դրամական միջոցները, f՝ ավանդներում արտարժույթով առկա դրամական միջոցները, g՝ **մետաղական հաշիվներում առկա միջոցներ**՝ չնշելով մնացորդի չափ:): Եթե առկա դրամական միջոցները գրավադրված են, ապա բանկը պետք է նշում կատարի նաև գրավադրված լինելու փաստի մասին ևս, որը բնութագրվում է p կոդով:*

Պարտապանի նկատմամբ առկա է նաև _____ (նշել վարույթի թիվը) վարույթով արգելանքի պահանջ:

Գումարը չի արգելադրվել, քանի որ նշված պարտապանի անձնական տվյալներում առկա են հետևյալ անճշտությունները՝

Սխալ տվյալներ _____

Չարգելադրված միջոցները բացակայում են _____ (թիվ _____ հաղորդագրության (հաղորդագրությունների) հիման վրա առկա են _____ արգելադրված դրամական միջոցներ)
(նշվում է գումարի չափը)

Հաշվեհամարը բացակայում է _____

Ի սկզբանե կիրառված չի եղել միջոցների արգելանք՝ այդ մասին արգելադրման Որոշում (հաղորդագրություն) չի ստացվել _____

Այլ (նշել) _____

Բանկի վարչության նախագահ _____ _____
(գործադիր տնօրեն) *(սփորագրություն)*

Գլխավոր հաշվապահ (ստորագրություն)

Հաղորդագրություն թիվ _____

Ի պատասխան թիվ _____ հաղորդագրության

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի անվանումը _____, ի կատարումն ՀԿԱԾ _____ բաժնի _____/բաժանմունքի/ _____-ի

(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ, կատարողական մակագրության թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

հիման վրա «____» _____ 20 թ. հարուցված թիվ _____կատարողական վարույթով կայացված որոշման/հաղորդագրության, հայտնում ենք, որ

«____» _____ 20 թ. դրությամբ

ՓԱՍՏԱՑԻ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ Է

_____ _____ ընդհանուր գումարով ՀՀ դրամ և

(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

փոխանցվել է _____

գանձապետական բաժանմունքի ՀԿԱԾ _____

բաժնի _____ հաշվին:

Եթե բռնագանձվող գումարը չի բավարարում, նշվում է պակաս բռնագանձված գումարը

_____ _____ ՀՀ դրամ

(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

Պահանջվում էր բռնագանձել

_____ _____ ընդհանուր գումարով ՀՀ դրամ:

(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

Պարտապան՝ _____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն)

_____

Պարտապանի նկատմամբ առկա է նաև _____ (նշել վարույթի թիվը) վարույթով բռնագանձման պահանջ:

Գումարը չի բռնագանձվել, քանի որ նշված պարտապանի անձնական տվյալներում առկա են հետևյալ անճշտությունները

Սխալ տվյալներ _____, այդ թվում արգելադրված միջոցի տեսակի կոդի սխալ՝ հաղորդագրության մեջ չի լրացվել կամ սխալ է նշվել _____

Չարգելադրված միջոցները բացակայում են _____ (թիվ _____ հաղորդագրության (հաղորդագրությունների) հիման վրա առկա են _____ արգելադրված դրամական միջոցներ)
(նշվում է գումարի չափը)

Հաշվեհամարը բացակայում է _____

Ի սկզբանե կիրառված չի եղել միջոցների արգելանք՝ այդ մասին հաղորդագրություն (Որոշում) չի ստացվել _____

Այլ (նշել) _____

Բանկի վարչության նախագահ _____ _____
(գործադիր փնօրեն) *(սփորագրություն)*

Գլխավոր հաշվապահ _____
(սփորագրություն)

*«Դրամական միջոցների փոխանցման հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգը» կանոնակարգ 19.1-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգել դրամական միջոցների փոխանցման հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգն ու պայմանները, նվազեցնել և կանխարգելել համագործակցության հնարավոր ռիսկերը, որոնք կարող են վտանգել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը, ինչպես նաև նվազեցնել դրամական միջոցների փոխանցման իրականացման արդյունքում Հայաստանյան ֆինանսական կազմակերպությունների մոտ առաջացող հնարավոր բացասական հետևանքները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 41-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Դրամական միջոցների փոխանցման հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգը» կանոնակարգ 19.1-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցման իրականացման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության մասին» թիվ 105-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից իննամսյա ժամկետում դրամական միջոցների փոխանցման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվություն ունեցող հայաստանյան մասնակիցները արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի հետ համագործակցությունը պետք է իրականացնեն հայաստանյան վճարահաշվարկային համակարգի միջոցով: Սույն մասով սահմանված իննամսյա ժամկետի ավարտից հետո ուժը կորցրած է ճանաչվում Հայաստանյան Մասնակիցներին տրված՝ դրամական միջոցների փոխանցման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվությունները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

30 ապրիլի 2021 թ., Ն 53-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. ապրիլի 27-ին (ՀՀԳՏ, 07.05.2021):

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2021 թվականի ապրիլի 27-ի
թիվ 53-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 19.1

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայություն մատուցելու դեպքում հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի (այսուհետ՝ համապատասխանաբար Հայաստանյան համակարգ և Արտասահմանյան համակարգ) համագործակցության կարգին ու պայմաններին ներկայացվող պահանջները, համագործակցության իրականացման նկատմամբ պահանջները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Հայաստանյան համակարգերի այն օպերատորների վրա, որոնք համագործակցում են Արտասահմանյան համակարգերի օպերատորների հետ կամ դիմել են Կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգով սահմանված համագործակցության իրականացման թույլտվություն ստանալու համար:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում վճարային քարտի և (կամ) էլեկտրոնային փողի միջոցով վճարումների ընդունում և կատարում ապահովող այն վճարային համակարգերի վրա, որոնցում դրամական միջոցների փոխանցման կատարումը սահմանված է բացառապես տվյալ վճարային քարտի և (կամ) էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման պայմանները սահմանող համակարգի կանոններով:

4. Սույն կանոնակարգով սահմանված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ ցանցի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Փաստաթղթերը ներկայացվում են Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի Էֆ» ֆորմատով (բացառությամբ՝ էքսել ֆորմատով ներկայացվող փաստաթղթերի):

5. Սույն կանոնակարգի իմաստով.

1) դրամական միջոցների փոխանցումը Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայության ամբողջական կատարմանն ուղղված գործընթաց է, որի արդյունքում ապահովվում է վճարողից կանխիկով կամ դրա բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվառման հաշվից (այսուհետ՝ Հաշիվ) դրամական միջոցների և համապատասխան կարգադրության ընդունումը և շահառուին կանխիկով կամ դրա Հաշվին այդ միջոցների տրամադրումը՝ վճարահաշվարկային ծառայություն մատուցելու իրավասություն ունեցող կազմակերպության (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) կողմից: Սույն կետից բացառություն է կազմում վճարողի կողմից շահառուի Հաշվին միջոցների մուտքագրումը և (կամ) Հաշվից դուրսբերումը (կանխիկացումը), այն դեպքում,

երբ շահառուի հաշվին միջոցների մուտքագրում և (կամ) դուրսբերում (կանխիկացում) իրականացնելու պահին հնարավոր է նույնականացնել, որ վճարողը և (կամ) միջոցների ստացողն ու շահառուն միևնույն անձն է,

2) դրամական միջոցների փոխանցման համակարգը դրամական միջոցների փոխանցման գործընթացը ապահովող կանոնների, ընթացակարգերի և սպասարկող տեխնիկածրագրային միջոցների ամբողջություն է, որը մշակվում և գործարկվում է համակարգի օպերատորի կողմից և որին հասանելիություն ապահովելու նպատակով ֆինանսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն դրամական փոխանցման ծառայությունը հասանելի է դառնում պայմանագրի կողմ չհանդիսացող ֆինանսական կազմակերպության հաճախորդին:

6. Սույն կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԿԱՄ ՄԵՐԺՈՒՄԸ

7. Հայաստանյան համակարգի օպերատորը Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության համար պետք է ստանա Կենտրոնական բանկի թույլտվությունը՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
2) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության տնտեսական հիմնավորման տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
3) Արտասահմանյան համակարգի գործունեության և Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրամական միջոցների փոխանցման իրականացման ընդհանուր նկարագրությունը և գործունեությանն առնչվող այլ տեղեկատվության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,
4) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցելու արդյունքում Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի,
5) Արտասահմանյան համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրի պատճենը կամ կնքվելիք պայմանագրի նախագիծը: Ընդ որում, այն դեպքում, երբ Հայաստանյան համակարգի օպերատորի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացվել է Արտասահմանյան համակարգի օպերատորի հետ կնքվող պայմանագրի նախագիծը, ապա Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության համար Կենտրոնական բանկի կողմից թույլտվության տրամադրման դեպքում՝ այդ թույլտվությունը ուժի մեջ մտնելուց հետո՝ առավելագույնը երկու ամսվա ընթացքում, Հայաստանյան համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում ստորագրված պայմանագրի պատճենը,
6) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո հնարավոր ռիսկերի գնահատման վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,
7) Արտասահմանյան համակարգի և դրա սեփականատերերի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,
8) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների միջև համաձայնեցված համագործակցության կարգն ու պայմանները նկարագրող փաստաթղթեր՝ համաձայն սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված պահանջների,

9) Հայաստանյան համակարգի օպերատորի հայեցողությամբ այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Արտասահմանյան համակարգի գործունեության, ինչպես նաև դրա հետ համագործակցության առանձնահատկությունները բնութագրելու և պարզելու համար:

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկանքը կարող է չպարունակել այն տեղեկությունները, որոնք արդեն իսկ ներառված են Կենտրոնական բանկ ներկայացված այլ փաստաթղթերում: Այդ դեպքերում տեղեկանքը պետք է պարունակի հղում նշված իրավունքները կամ պարտականությունները սահմանող փաստաթղթի համապատասխան կետերին (օրինակ՝ Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո վերջնահաշվարկի ապահովման հետ կապված Հայաստանյան համակարգի օպերատորի պարտականությունը և իրավունքները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները ------ տես՝ --.--.----թ. հաստատված Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության պայմանագրի 1-ից 4-րդ կետեր):

9. Եթե սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանյան համակարգի օպերատորին, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Սույն կետով սահմանված ժամկետի ընթացքում թերությունները չշտկելու դեպքում Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվությունը մերժվում է՝ փաստաթղթերը թերի կամ ոչ ամբողջական լինելու հիմքով:

10. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված բոլոր փաստաթղթերը ստանալու պահից երկամսյա ժամկետում տալիս է Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվությունը կամ մերժում է թույլտվության տրամադրումը: Սույն կետով նախատեսված երկամսյա ժամկետը, որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին Հայաստանյան համակարգի օպերատորին չտեղեկացնելու դեպքում թույլտվությունը համարվում է տրված:

11. Հայաստանյան համակարգի օպերատորը կարող է Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության համար թույլտվություն ստանալու միջնորդագրին ընթացք չտալու դիմում ներկայացնել՝ մինչև թույլտվության ստացումը:

12. Կենտրոնական բանկը մերժում է Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության համար թույլտվության տրամադրումը, եթե.

1) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին,
3) Արտասահմանյան համակարգի հետ Համագործակցության կարգն ու պայմանները չեն համապատասխանում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին, կամ այդպիսի համագործակցությունը կարող է վտանգել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը, կամ կհանգեցնի Հայաստանյան համակարգի օպերատորի ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ կարող է վտանգել ֆինանսական համակարգի սպառողների շահերը,
4) Արտասահմանյան համակարգի օպերատորը կամ դրա սեփականատերերից որևէ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում:

13. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին տեղեկացնում է Հայաստանյան համակարգի օպերատորին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Հայաստանյան համակարգի օպերատորն իրավունք ունի Համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու նոր միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր կարգով:

14. Սույն կանոնակարգով սահմանված թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար, սույն կանոնակարգի համաձայն, ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն, համապատասխան փոփոխություններ առկա չլինելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

15. Կենտրոնական բանկի կողմից վարվում է Արտասահմանյան համակարգերի օպերատորների հետ համագործակցության համար տրամադրված թույլտվությունների գրանցամատյան, որում նշվում են հետևյալ տեղեկությունները.

1) Արտասահմանյան համակարգի անվանումը,
2) Կենտրոնական բանկի խորհրդի Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության համար թույլտվություն տալու վերաբերյալ համապատասխան որոշման համարը և ամսաթիվը,
3) Հայաստանյան համակարգի անվանումը,
4) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվությունը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը:

16. Թույլտվությունների գրանցամատյանը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ ԿԱՄ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ

17. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության կարգն ու պայմանները նկարագրող փաստաթղթերը պետք է ներառեն.

1) համագործակցությունը նկարագրող սխեման, այդ թվում՝ ծառայության մատուցման կարգը, ժամանակային գրաֆիկը, ծառայությունների հետ կապված գումարային, քանակական սահմանափակումները, կատարման առավելագույն ժամկետները, դրամական միջոցների փոխանցման հետկանչի, չեղարկման կարգը, ժամկետները, ինչպես նաև լրացման և փոխանցման ենթակա պարտադիր վավերապայմանները /տեղեկատվությունը,
2) պրոցեսինգի, քլիրինգի և(կամ) վերջնահաշվարկի իրականացման կարգն ու պայմանները, դրանց իրականացմանը ներկայացվող պահանջները, ներառյալ՝ անվերադարձելիության և վերջնականության պահերի սահմանումը,

3) դրույթ, համաձայն որի համագործակցության շրջանակներում փոխանցումների իրականացումը և վերջնահաշվարկի կատարումը ապահովելու նպատակով Արտասահմանյան համակարգի օպերատորը պարտավոր է Հայաստանյան համակարգի հաշվարկային բանկում ունենալ հաշիվ և համապատասխան ապահովվածություն, որի չափով նախատեսում է կատարել փոխանցումներ,

4) Արտասահմանյան համակարգի օպերատորի գրանցման երկրի օրենսդրության կամ քաղաքականության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ Հայաստանյան համակարգի օպերատորի քաղաքականության համաձայն Հայաստանյան համակարգի հաշվարկային բանկում հաշիվ ունենալու սահմանափակում նախատեսված լինելու դեպքում դրույթ, համաձայն որի համագործակցության շրջանակներում փոխանցումների իրականացումը և վերջնահաշվարկի կատարումը ապահովելու նպատակով Արտասահմանյան համակարգի օպերատորը պարտավոր է՝

ա. ընտրել Հայաստանյան համակարգի մասնակից, որը կհանդիսանա Արտասահմանյան համակարգի օպերատորի հաշվարկային գործակալ (այսուհետ՝ Հայաստանյան համակարգի հաշվարկային գործակալ մասնակից), ունենալ դրա հետ կնքած պայմանագիր, և Հայաստանյան համակարգի Հաշվարկային բանկում բացված հաշվարկային գործակալ հանդիսացող մասնակցի բանկային հաշվին ունենալ համապատասխան ապահովվածություն, որի չափով նախատեսում է կատարել փոխանցումներ, կամ

բ. Հայաստանյան համակարգի հաշվարկային գործակալ մասնակցի համաձայնությամբ, արտասահմանյան բանկում վարվող համակարգի հաշվարկային գործակալ մասնակցի հաշվին ունենալ համապատասխան ապահովվածություն, որի չափով նախատեսում է կատարել փոխանցումներ:

5) դրույթ, համաձայն որի՝ Արտասահմանյան համակարգով դրամական միջոցների փոխանցում նախաձեռնելու համար Հայաստանյան համակարգի հաշվարկային բանկում Արտասահմանյան համակարգի օպերատորի համար համապատասխան ապահովվածություն չունենալու դեպքում Հայաստանյան համակարգի օպերատորը պարտավոր է մերժել դրամական փոխանցման կատարումը,

6) դրույթ, համաձայն որի՝ Հայաստանյան համակարգի օպերատորը պարտավոր է գնահատել իր համակարգում հաշվարկային գործակալ մասնակցի և Արտասահմանյան համակարգի օպերատորի միջև գործող հարաբերություններից ծագող ռիսկերը և դրանց կանխարգելմանն ուղղված՝ Հայաստանյան համակարգում հաշվարկային գործակալ մասնակցի կողմից կիրառվող միջոցները՝ ներկայացնելով դրանց նկարագրությունը,

7) Համագործակցության կասեցման և (կամ) դադարեցման ընթացակարգերը,

8) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրա հետ ինտեգրված (հարակից) համակարգի միջոցով Հայաստանյան համակարգով և հակառակ ուղղությամբ ծառայություններ մատուցելու դեպքում՝ ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները (առկայության դեպքում): Ընդ որում՝ սույն կանոնակարգի իմաստով՝ Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրա հետ ինտեգրված/հարակից համակարգեր են հանդիսանում այն վճարահաշվարկային համակարգերը, որոնց հետ Արտասահմանյան համակարգի օպերատորը կնքել է պայմանագիր, որի արդյունքում Հայաստանյան համակարգով նախաձեռնված կամ դեպի Հայաստանյան համակարգ ուղղված դրամական միջոցների փոխանցումը հնարավոր է վճարել կամ նախաձեռնել, այդ թվում և այդ ինտեգրված համակարգով,

9) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության չափը,

10) սակագնային քաղաքականությունը, կիրառվող միջնորդավճարները՝ համապատասխան հիմնավորումներով և հաշվարկներով,

11) նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ օպերատորների միջև միմյանց տեղեկացման կարգը, այդ թվում՝ համագործակցության պայմանագրով կամ այլ փաստաթղթով նախատեսված օպերատորների իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության փոփոխման հետ կապված դրույթները,
12) դրամական միջոցների փոխանցումը Արտասահմանյան համակարգերից որևէ մեկով (այդ թվում՝ երբ առկա է համագործակցություն Արտասահմանյան համակարգի հետ ինտեգրված (հարակից) համակարգերով հաճախորդի կողմից չստանալու դեպքում՝ Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների գործողությունների կարգն ու պայմանները, արձագանքման առավելագույն ժամկետները,
13) մատուցված ծառայությունների հետ կապված հաճախորդի կողմից բողոք ներկայացնելու կարգն ու պայմանները, այդ թվում՝ Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրա հետ ինտեգրված (հարակից) համակարգով մատուցելու դեպքում,
14) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի համագործակցության ներքո վճարային փաստաթղթերի և կարգադրությունների էլեկտրոնային եղանակով փոխանակման կարգը,
15) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի անխափան աշխատանքի, տեղեկատվության մշակման, պահպանման, ներկայացման, ստացման, փոխանցման և գործարքների ժամանակին մշակման ապահովմանն ուղղված չափանիշները և դրանց ապահովման կարգը,
16) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերում տեղեկատվության պահպանմանը ներկայացվող պահանջները,
17) արտակարգ իրավիճակներում համագործակցության ներքո Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների գործողությունների կարգն ու պայմանները, վերականգնման միջոցառումները և ժամկետները,
18) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերում տեղի ունեցած և համագործակցության վրա ազդող խափանումների վերաբերյալ Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորներին տեղեկացման կարգն ու պայմանները:

18. Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերից յուրաքանչյուրի պաշտոնական ինտերնետային կայքում պետք է առկա լինի նրանց համագործակցության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև հղում համագործակցող Հայաստանյան և (կամ) Արտասահմանյան այն համակարգի կայքին, որի միջոցով հնարավոր կլինի ստանալ տեղեկատվություն համագործակցող համակարգի սպասարկման կետերի վերաբերյալ:

19. Դրամական միջոցների փոխանցման հայաստանյան շահառուն պետք է հնարավորություն ունենա ստանալու համագործակցող ցանկացած արտասահմանյան համակարգով ուղարկված փոխանցումը՝ Հայաստանյան համակարգի ցանկացած մասնակցի միջոցով:

20. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվությունը, եթե.

1) Հայաստանյան համակարգի օպերատորը խախտել է Հայաստանի Հանրապետության օրենքների և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև
2) Հայաստանյան համակարգի օպերատորը չի պահպանել սույն կանոնակարգի 7-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահանջը,
3) սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացված համագործակցության թույլտվության հիման վրա Հայաստանյան համակարգի օպերատորի կողմից ավելի քան մեկ տարի չի իրականացվել հա-

մապատասխան ծառայությունների մատուցում, և որի վերաբերյալ չեն ներկայացվել հիմնավոր պատճառներ: Նշված մեկ տարի ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը 6 ամիս ժամկետով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում,

4) դադարել է Արտասահմանյան համակարգի և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորի գործունեությունը և (կամ) դրանց երկրի իրավասու մարմնի կողմից նշանակվել է ժամանակավոր ադմինիստրացիա, կառավարիչ կամ նման այլ մարմին,
5) փոխվել է Արտասահմանյան համակարգի օպերատորը կամ հաշվարկային բանկը,
6) վտանգվել է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը, և (կամ) վճարունակությունը,
7) չեն պահպանվել սույն Գլխով սահմանված պահանջները,
8) վտանգված են ֆինանսական համակարգի սպառողների շահերը,

21. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը կարող են վտանգվել այն դեպքերում, երբ.

1) Արտասահմանյան համակարգի օպերատորի գործունեությունը կարգավորվում է այն երկրի օրենսդրությամբ, որը լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք է,
2) Արտասահմանյան համակարգի օպերատորը կամ դրա սեփականատերերից որևէ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում,
3) Արտասահմանյան համակարգի օպերատորը այլ երկրների համեմատությամբ անհավասար պայմաններ է սահմանում (ստեղծում) իր համակարգի հետ Հայաստանյան համակարգի օպերատորի համագործակցության համար, կամ Արտասահմանյան համակարգի օպերատորի կողմից սահմանված պահանջների արդյունքում սահմանափակվում կամ կարող է սահմանափակվել ազատ տնտեսական մրցակցությունը: Սույն ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվություն հայցող (կամ համագործակցող) Հայաստանյան համակարգի օպերատորը կամ Արտասահմանյան համակարգի օպերատորը կարող է ներկայացնել համապատասխան հիմնավորում սույն ենթակետով սահմանված հիմքերի առկայության անխուսափելիության կամ անհրաժեշտության վերաբերյալ: Այդ հիմնավորումները Կենտրոնական բանկի կողմից ընդունվելու դեպքում սույն ենթակետով նախատեսված հիմքերը չեն համարվի Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությանը և (կամ) իրացվելիությանը, և (կամ) վճարունակությանը վտանգող,
4) Արտասահմանյան համակարգի օպերատորի կողմից Հայաստանյան համակարգի օպերատորի հետ կնքված համագործակցության պայմանագրում, և(կամ) ցանկացած այլ փաստաթղթում, որով կարգավորվում են Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների միջև հարաբերությունները.

ա. սահմանված է Արտասահմանյան համակարգի օպերատորի իրավասությունը՝ դադարեցնելու Հայաստանյան համակարգի օպերատորի հետ համագործակցությունը, և միաժամանակ սահմանված չեն դադարեցնելու պայմանները (պատճառները, հիմքերը, ժամկետները) և ընթացակարգերը (այդ թվում՝ տեղեկացման), կամ դրանք սահմանված են ոչ հստակ (չեն կարող մեկնաբանվել միանշանակորեն), կամ

բ. Հայաստանյան համակարգի օպերատորին արգելվում է այլ նմանատիպ վճարահաշվարկային համակարգերի հետ համագործակցությունը, կամ

գ. սահմանված չեն իրացվելիության, վարկային, հաշվարկային կամ գործառնական ռիսկերի զսպման, սահմանափակման մեխանիզմներ, որոնց բացակայության կամ անբավարարության հետևանքով Հայաստանյան համակարգի օպերատորը կամ Հայաստանյան համակարգի մասնակիցները կարող են կրել ֆինանսական կորուստներ, կամ կարող է վարկաբեկվել դրա բարի համբավը,

դ. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության կարգում և պայմաններում սահմանված է Հայաստանյան համակարգի օպերատորի մասնակիցների նկատմամբ որոշակի սահմանափակում կիրառելու պահանջ,

ե. սահմանված են Արտասահմանյան համակարգի հետ համագործակցությունը դադարելու կամ պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցման մեկ ամսից պակաս ժամկետ, հիմքեր, պայմաններ, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ե1. Հայաստանյան համակարգի օպերատորի կողմից համագործակցության շրջանակներում իր պարտավորությունների չկատարումը, կամ

ե2. Արտասահմանյան համակարգի օպերատորի երկրի իրավասու մարմնի կողմից այնպիսի որոշման ընդունումը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավորեցնում կամ որևէ այլ կերպ պարտադրում է Արտասահմանյան համակարգի օպերատորին մեկամսյա ժամկետից շուտ դադարեցնել Հայաստանյան համակարգի օպերատորի հետ համագործակցությունը, կամ

ե3. Հայաստանյան համակարգի օպերատորի 10 %-ից ավելի ձայնի իրավունք ունեցող սեփականատերերի (բաժնետերերի) փոփոխությունը, կամ

ե4. Հայաստանյան համակարգի գործունեության կասեցման/դադարեցման դեպքում:

22. Հայաստանյան համակարգի օպերատորի նկատմամբ վերահսկողության իրականացման կամ Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության կարգում ու պայմաններում սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված փոփոխությունների կատարման արդյունքում, սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված հիմքերից (դեպքերից) ցանկացածի բացահայտման/ի հայտ գալու դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվության տրամադրումը կամ ուժը կորցրած ճանաչել կամ կասեցնել իր կողմից տրված համագործակցության թույլտվությունը:

23. Համագործակցության թույլտվության կասեցման ողջ ժամանակաշրջանում Հայաստանյան համակարգի օպերատորը Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո չի կարող որևէ վճարահաշվարկային ծառայություն մատուցել տվյալ Արտասահմանյան համակարգով, բացառությամբ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից կասեցման որոշման մեջ նշված առանձին վճարահաշվարկային ծառայությունների:

ԳԼՈՒԽ 5. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Հայաստանյան համակարգի օպերատորը Կենտրոնական բանկին տեղեկացնում է Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության կարգը և պայմանները սահմանող փաստաթղթերում կատարվող հետևյալ փոփոխությունների վերաբերյալ.

1) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Արտասահմանյան համակարգի օպերատորի, հաշվարկային բանկի, քլիրինգ և (կամ) պրոցեսինգ իրականացնող կազմակերպության փոփոխության դեպքում,
2) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների միջև համագործակցության ներքո մատուցվող ծառայությունների ցանկի փոփոխության և(կամ) նախկինում մատուցվող ծառայությունների իրականացման վճարահաշվարկային սխեմայի (մեխանիզմների) փոփոխության դեպքում,
3) սակագնային քաղաքականության կամ կիրառվող միջնորդավճարների փոփոխության դեպքում,
4) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո վերջնահաշվարկի իրականացման մեխանիզմների կամ ժամկետների փոփոխության դեպքում,
5) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության չափանիշների (պայմանների), համագործակցության կասեցման կամ դադարեցման պայմանների փոփոխության դեպքում,
6) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների դեպքում,
7) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության կասեցման, դադարեցման կամ վերսկսման դեպքում,
8) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո կիրառվող տեղեկատվական անվտանգության մեխանիզմների փոփոխության դեպքում,
9) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո ինտեգրված (հարակից) համակարգերի և ինտեգրման սխեմաների փոփոխության դեպքում,
10) Արտասահմանյան համակարգի օպերատորի գործունեությունը կարգավորող իրավասու մարմնի կողմից տվյալ Արտասահմանյան համակարգի օպերատորի և(կամ) համակարգի գործունեությունը դադարեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու որոշման դեպքում,
11) Արտասահմանյան համակարգի օպերատորի և(կամ) Արտասահմանյան համակարգի գործունեության կասեցման (ժամանակավոր դադարեցման) դեպքում,
12) Այլ փոփոխությունների դեպքում, որոնք կարող են հանգեցնել փոխադարձ իրավասությունների կամ պարտավորությունների փոփոխությանը կամ սույն կանոնակարգի Հավելված 5-ով սահմանված մեթոդաբանությամբ գնահատվող ռիսկերի ավելացմանը:

Հավելված 1

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ ին

Հայաստանյան համակարգի անվանումը———————————————————:

Արտասահմանյան համակարգի անվանումը, պաշտոնական կայքը _____:

Արտասահմանյան համակարգի օպերատորի անվանումը (գրանցման հասցեն, երկիրը), տեսակը (բանկ, վճարահաշվարկային կազմակերպություն), պաշտոնական կայքը _____:

Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Հայաստանյան համակարգի կողմից դրամական միջոցների փոխանցման ծառայության մատուցում.

ա. առանց բանկային հաշիվների բացման դրամական փոխանցումների ծառայությունը նշվում է հետևյալ բացվածքով՝ փոխանցումների կատարումը ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց, շահառուին միջոցների տրամադրում կանխիկ և (կամ) անկանխիկ եղանակով, փոխանցումների կատարում տերմինալների միջոցով և այլ,

_____:

(նշել)

բ. բանկային հաշիվների միջոցով դրամական միջոցների փոխանցման ծառայությունը նշվում է հետևյալ բացվածքով՝ միջոցների տրամադրում (վճարում), այդ թվում՝ քարտային հաշիվներին/հաշվից դրամական միջոցների փոխանցում կատարելու միջոցով, քլիրինգի, պրոցեսինգի և/կամ վերջնահաշվարկի ծառայությունների իրականացում,

_____:

(նշել)

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը _____
_____

(Արտասահմանյան համակարգի անվանումը)

համագործակցելու համար:

Կից ներկայացնում եմ՝

_____
_____
_____
_____
_____
_____
_____:

Համագործակցության նախապատրաստական աշխատանքների ավարտը նախատեսվող ժամկետ
_____:

(նշել օր/ամիս/տարի)

«Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է, ամբողջական և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության»:

Հայաստանյան համակարգի օպերատորի գործադիր տնօրեն՝

_____ _____

(անուն, ազգանունը) *(սփորագրությունը)*

Հավելված 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ

1. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության տնտեսական հիմնավորման տեղեկանքը պետք է առնվազն ներառի կոնկրետ հաշվարկներ, վերլուծություններ և գնահատված լինի թվային տվյալներով և կազմված հիմնավորման ներկայացմանը հաջորդող երեք տարիների համար: Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության տնտեսական հիմնավորումը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1) Ընդհանուր դրույթներ.
   ա. Արտասահմանյան համակարգի անվանումը,
   բ. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության նպատակները (հեռանկարները):
2) Գործունեության հիմնական ուղղությունները.
   ա. Հայաստանյան համակարգի կողմից իրականացվելիք գործառնությունների տեսակները և դրանց համառոտ բնութագիրը,
   բ. ապագայում նախատեսվող ծառայությունները:
3) Մարքեթինգային վերլուծություն.
   ա. ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),
   բ. ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում Հայաստանյան համակարգի օպերատորը պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները),
   գ. հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը:
4) Ռազմավարությունը.
   ա. դիրքավորում,
   բ. խթանման ռազմավարություն,
   գ. գնային ռազմավարություն,
   դ. ներդրումային ծրագիր:
5) Եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվարկը.
   ա. ֆինանսավորման աղբյուրները,
   բ. առաջիկա երեք տարիների համար կանխատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱՍ I

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտասահմանյան համակարգի գործունեության ընդհանուր նկարագրությունը պետք է առնվազն պարունակի.

1) Արտասահմանյան համակարգի գործունեության նպատակը (առանց բանկային հաշիվների բացման միջազգային դրամական միջոցների փոխանցման, վճարային քարտերով/քարտերին դրամական միջոցների փոխանցման գործարքների կատարման ապահովում և այլն),
2) Արտասահմանյան համակարգի գործունեության աշխարհագրությունը (գործունեության երկրները և/կամ դրանց քանակը և այլն),
3) Արտասահմանյան համակարգի կողմից կիրառվող վճարային գործիքները (օրինակ՝ վճարման հանձնարարական, վճարային քարտ, չեկ, էլեկտրոնային փող և այլն),
4) Արտասահմանյան համակարգում մասնակիցների կողմից իրականացվող գործառնությունների/ծառայությունների իրականացման ընդհանուր գործընթացը, այդ թվում՝ վճարային և տեղեկատվական հոսքերի մշակման կարգը, պայմանները, ժամկետները, ինչպես նաև.
   ա. Արտասահմանյան համակարգի մասնակիցների միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները (զուտ սկզբունքով, համախառն սկզբունքով, հիբրիդ) և մեխանիզմները, ժամկետները և պարբերականությունը,
   բ. Արտասահմանյան համակարգում կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը (նկարագրել).
      բ1. ինտերնետ,
      բ2. առանձնացված կապուղի,
      բ3. այլ,
   գ. Արտասահմանյան համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերը և ինտեգրման սխեմաները (առկայության դեպքում, իսկ բացակայության դեպքում՝ Արտասահմանյան համակարգի օպերատորի հավաստումը այդ մասին): Ընդ որում՝ սույն կանոնակարգի իմաստով՝ Արտասահմանյան համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգեր են հանդիսանում այն վճարահաշվարկային համակարգերը, որոնց հետ Արտասահմանյան համակարգի օպերատորը կնքել է պայմանագիր՝ այդ թվում դրանց միջոցով դրամական միջոցների փոխանցում իրականացնելու նպատակով,
   դ. Արտասահմանյան համակարգում կիրառվող Տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկերի կառավարման, տեղեկատվական անվտանգության և գործունեության անընդհատության ապահովման մոտեցումները,

5) Արտասահմանյան համակարգի մասնակիցների, այդ թվում՝ օպերատորի վերաբերյալ տեղեկատվություն, որն առնվազն ներառում է.
   ա. Արտասահմանյան համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),
   բ. Արտասահմանյան համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),
   գ. Արտասահմանյան համակարգում վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը, գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),
   դ. Արտասահմանյան համակարգով փոխանցումների հասցեականությունը կամ հասցեական չլինելու դեպքում՝ այդ մասին նշումը և փոխանցման արժույթները:

ՄԱՍ II
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ընդհանուր նկարագրությունը պետք է առնվազն պարունակի.

1) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության նպատակը (առանց բանկային հաշիվների բացման միջազգային դրամական միջոցների փոխանցման, վճարային քարտերով/քարտերին դրամական միջոցների փոխանցման գործարքների կատարման ապահովում և այլն),
2) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության աշխարհագրությունը (գործունեության երկրները),
3) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո կիրառվող վճարային գործիքները (օրինակ՝ վճարման հանձնարարական, վճարային քարտ, չեկ, էլեկտրոնային փող և այլն),
4) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների և դրանց մասնակիցների կողմից իրականացվող գործառնությունների/ծառայությունների իրականացման ընդհանուր գործընթացը, այդ թվում՝ վճարային և տեղեկատվական հոսքերի մշակման կարգը, պայմանները, ժամկետները, ինչպես նաև.
   ա. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Հայաստանյան համակարգի և Արտասահմանյան համակարգի միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները (զուտ սկզբունքով, համախառն սկզբունքով, հիբրիդ) և մեխանիզմները, ժամկետները և պարբերականությունը,
   բ. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը (նկարագրել).
      բ1. ինտերնետ,
      բ2. առանձնացված կապուղի,
      բ3. այլ,
   գ. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրա հետ ինտեգրված/հարակից համակարգերը և ինտեգրման սխեմաները (առկայության, իսկ բացակայության դեպքում՝ Արտասահմանյան համակարգի օպերատորի հավաստումը այդ մասին),
   դ. Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի (ծրագրային ապահովումների) ինտեգրման (համակցման) սխեման (տեխնիկական նկարագրություն), այդ թվում՝ գործընթացների անընդհա-

տության և անվտանգության տեսանկյունից կողմերից յուրաքանչյուրի իրավունքները, պարտականությունները, խափանումների վերաբերյալ միմյանց տեղեկացման կարգի և ձեռնարկվող քայլերի նկարագրությունը,

ե. դրամական միջոցների փոխանցման իրականացման ողջ գործընթացի նկարագրությունը, որը պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ե1. ո՞ր համակարգից է օգտվում փոխանցում նախաձեռնող կողմը, և որ համակարգում է մշակվում փոխանցումը,

ե2. ո՞ր համակարգից է իրականացվում փոխանցման վճարումը շահառուին,

ե3. ո՞ր համակարգում է գեներացվում փոխանցման կոդը,

ե4. առկայության դեպքում այլ լրացուցիչ տեղեկատվություն:

5) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո.

ա. պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),

բ. քլիրինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),

գ. վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպությունը/կազմակերպությունները (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը, գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում)),

դ. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո սահմանված այլ համակարգերի հետ համագործակցության չափանիշները (առկայության դեպքում), մասնավորապես՝ Հայաստանյան համակարգի նկատմամբ համագործակցության առանձնահատուկ պայմանների առկայության դեպքում պետք է հստակ նկարագրված լինեն այդ Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո կիրառվող քաղաքականությունը և չափանիշները,

ե. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո դրամական միջոցների փոխանցման հասցեականությունը կամ հասցեական չլինելու դեպքում՝ այդ մասին նշումը և փոխանցման արժույթները:

Հավելված 4

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկանքը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները.

1) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո վերջնահաշվարկի ապահովման հետ կապված Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների պարտականությունները և իրավունքները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները,
2) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո արտասահմանյան այլ վճարահաշվարկային համակարգերում Հայաստանյան և (կամ) Արտասահմանյան համակարգերի օպերատորների համագործակցության իրավասության սահմանափակման հետ կապված պահանջի առկայությունը/բացակայությունը (առկա է արդյոք սահմանափակում կապված Հայաստանյան համակարգի օպերատորի և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորի կողմից նմանատիպ ծառայություններ մատուցող այլ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի հետ համագործակցելու հետ),
3) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ընդհատման/դադարեցման դեպքերն ու հիմքերը (սահմանված են արդյոք դեպքեր, երբ Հայաստանյան համակարգի և Արտասահմանյան համակարգի միջև համագործակցությունը կարող է ընդհատվել/դադարեցվել, եթե այո, ապա՝ ընդհատելու/դադարեցնելու ինչ հիմքեր և ժամկետներ են սահմանված յուրաքանչյուր դեպքի համար, տեղեկացման ինչ ընթացակարգեր, ժամկետներ, կարգ և պայմաններ են սահմանված),
4) Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո Հայաստանյան համակարգի օպերատորի և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորի կողմից իրենց ընթացակարգերում կատարված/կատարվող փոփոխությունների վերաբերյալ Հայաստանյան համակարգի օպերատորին և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորին տեղեկացնելու պարտավորությունը (նախատեսված է արդյոք Արտասահմանյան համակարգի գործունեությանը վերաբերող փոփոխությունների մասին Հայաստանյան համակարգի օպերատորին տեղեկացման գործընթաց և հակառակը, եթե այո, ապա, որ դեպքերում և ինչ ժամկետներում),
5) Հայաստանյան համակարգի օպերատորի և Արտասահմանյան համակարգի օպերատորի իրավասությունները և պարտականությունները՝ կապված գործառնությունների կատարման ժամանակ Հայաստանյան համակարգում և (կամ) Արտասահմանյան համակարգում սահմանված անվտանգության արարողակարգերը ապահովելու հետ,
6) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների պարտավորությունը՝ կապված հաճախորդներին դրամական փոխանցման ծառայության մատուցման ժամկետների հետ, ինչպես նաև դրանց խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները,
7) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների պարտավորությունը՝ կապված Հայաստանյան համակարգի և (կամ) Արտասահմանյան համակարգի անխափան աշխատանքի

ապահովման, ինչպես նաև հաճախորդներին դրամական փոխանցման ծառայության մատուցման անհնարինության հետ (այդ թվում՝ Հայաստանյան և (կամ) Արտասահմանյան համակարգերի օպերատորների կամ դրանց այլ մասնակցի մեղքով նախատեսված դրամական փոխանցման ծառայության չկատարման, ինչպես նաև հաճախորդին փոխհատուցման հետ),

8) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների պարտավորությունները, պատասխանատվությունը և իրավասությունները՝ կապված իր կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ հաճախորդների կողմից անհամաձայնություն ունենալու և բողոքարկելու հետ,

9) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների պատասխանատվությունը՝ կապված զեղծարարությունների կամ այլ կերպ գաղտնի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու արդյունքում հաճախորդին վնաս հասցնելու/միջոցների կորստի հետ,

10) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի մասնակիցների պատասխանատվությունը՝ կապված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ, և մասնակիցներին տվյալ բնագավառում ներկայացվող պահանջները,

11) Հայաստանյան և Արտասահմանյան համակարգերի օպերատորների իրավասությունները/պարտավորությունները դրամական փոխանցման գործարքի չեղարկման դեպքում (նշել նաև պայմանները և ժամկետները),

12) Համապատասխան հարցման դեպքում Հայաստանյան և (կամ) Արտասահմանյան համակարգերով կատարվող/կատարված դրամական միջոցների փոխանցման մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ ստանալու Հայաստանյան համակարգի օպերատորի և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորի իրավասությունը (սահմանված է արդյոք դրույթ, համաձայն որի Հայաստանյան համակարգի օպերատորը և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորը պարտավորվում է Հայաստանյան համակարգի օպերատորի և (կամ) Արտասահմանյան համակարգի օպերատորի հարցման դեպքում նրան տրամադրել իր համակարգով կատարվող/կատարված դրամական միջոցների փոխանցման մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման վերաբերյալ տվյալներ):

Հավելված 5

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության ներքո առաջացող հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանքը պետք է ներառի հետևյալ ռիսկերի վերլուծությունը և դրանց կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված ընթացակարգերի, միջոցառումների և մեխանիզմների նկարագրությունը.

1) իրացվելիության ռիսկ. երբ համակարգերից մեկն ունենում է (կարող է ունենալ) իրացվելիության համալրման ժամանակավոր խնդիրներ և չի կարողանում (չի կարողանա) ժամանակին կատարել վերջնահաշվարկի հետ կապված իր կողմից ստանձնած պարտավորությունները,
2) վարկային ռիսկ. երբ համակարգերից մեկը չի կարողանում կամ հրաժարվում է կատարել (կարող է չկատարել կամ հրաժարվել կատարել) վերջնահաշվարկի հետ կապված իր կողմից ստանձնած պարտավորությունները,
3) հաշվարկային ռիսկ. երբ խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) հաշվարկների (վերջնահաշվարկի) հետ կապված,
4) գործառնական ռիսկ. երբ խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) համագործակցության շրջանակներում սահմանված գործառույթների իրականացման հետ կապված տեխնիկածրագրային անսարքությունների, մասնակիցների սխալի և խարդախությունների հետևանքով,
5) իրավական ռիսկ. երբ խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) ոչ հստակ իրավական հիմքերի և գործարքի մասնակից երկրների օրենսդրությունների տարբերության հետևանքով,
6) Արտասահմանյան համակարգի օպերատորի և հաշվարկային գործակալի հետ կապված ռիսկեր.
   ա. Արտասահմանյան համակարգի օպերատորի անվճարունակության դեպքում,
   բ. հաշվարկային գործակալի (այդ թվում՝ եթե կա միասնական հաշվարկային գործակալ) սնանկության դեպքում:

2. Ռիսկերի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ դրույթները.

1) Համագործակցության հաշվարկային սխեման/ մեխանիզմը (զուտ, համախառն, այլ (նշել)),
2) համակարգերի միջև վերջնահաշվարկի կատարման պարբերականությունը, ժամկետները և կարգը,
3) վերջնականության ու անվերադարձելիության պահը և դրանց հստակ սահմանումը համագործակցության կարգում և պայմաններում, իրավական հստակությունը (արդյոք հստակ է սահմանված և որտեղ է սահմանված), համագործակցության ընթացքում որևէ երկրի օրենսդրության գերակայությունը կամ կարևոր այլ պայմաններ, և եթե գերակայությունը տրվում է այլ երկրի օրենսդրությանը, ապա երկրների միջև առկա տարբերությունների կամ դրանց բացակայության մասին վերլուծություն,
4) հաշվարկների զուտացման դեպքում՝ գործընթացի, ժամկետների և համակարգերի օպերատորների պարտավորությունների ու պատասխանատվության հստակ նկարագրությունը Համակարգերի համագործակցության կարգում և պայմաններում,
5) հնարավոր կիրառվող սահմանաչափերի առկայությունը, չափը, և դրանց կիրառման արդյունքում առաջացող հնարավոր խոչընդոտները/ անհարմարությունները,

6) վերջնահաշվարկի ապահովման նպատակով վերջնահաշվարկի հաշվի/հաշիվների չնվազող մնացորդի, նախնական դեպոնացման կամ դեպոզիտի կիրառման մեխանիզմների առկայությունը, երաշխիքային միջոցների կիրառումը,
7) համակարգերի շրջանակներում վերջնահաշվարկի անխափան աշխատանքի իրականացման համար իրացվելիության ապահովման հնարավոր աղբյուրները, միջոցները և ժամկետները,
8) իրացվելիության (հաշվի մնացորդ, զուտ դիրքի դիտարկում, օրվա վերջում քաղվածքի, զուտ դիրքերի վերաբերյալ տեղեկացում և այլն) և/կամ կատարված վճարումների (ստացված, փոխանցված, վճարման ենթակա և այլն) մոնիտորինգի հնարավորությունները,
9) կարճաժամկետ իրացվելիության խնդիրների դեպքում համագործակցող օպերատորների կողմից վարկավորման հնարավորությունները (մեխանիզմների առկայություն),
10) արտակարգ իրավիճակներում իրացվելիության տրամադրումը կամ գործող հաշվարկային այլ մեխանիզմներ,
11) վարկավորման հնարավորության դեպքում գրավի ապահովման մեխանիզմների կիրառումը և այդ գործընթացի իրավական հստակությունը,
12) հաշվարկային գործակալի կամ միմյանց (օպերատորների) վարկարժանության գնահատումը,
13) տեղեկատվական անվտանգության ռիսկի սահմանափակմանն ու կառավարմանն ուղղված ընթացակարգերը, միջոցառումները և մեխանիզմները.
    ա. վճարահաշվարկային ծառայությանն առնչվող տվյալների ամբողջականության ապահովման և պահպանման մեխանիզմները,
    բ. սահմանված անվտանգության արարողակարգերը, կիրառվող ստանդարտները և անվտանգության այլ մեխանիզմներ,
14) Համագործակցող համակարգերի աշխատանքների խափանման/ անհնարինության դեպքում այլընտրանքային մեխանիզմների առկայությունը և գործընթացի հստակությունն ու հուսալիությունը,
15) համագործակցության մեկնարկից առաջ համակարգերի թեստավորման իրականացումը և արդյունքների վերլուծությունը,
16) սխալների դեպքում մեղավոր կողմի/կողմերի պատասխանատվության հստակ նկարագրությունը (այդ թվում՝ օպերատորի մեղավորության դեպքում),
17) խախտումների դեպքում պատասխանատվության հստակ տարանջատումը,
18) Համակարգերի կանոններում էական փոփոխությունների կատարման դեպքում համագործակցող կողմի օպերատորին դրանց վերաբերյալ տեղեկացման պարտավորության առկայությունը, ժամկետները և գործընթացը,
19) համագործակցության կարգում և պայմաններում աշխատանքների դադարեցման/կասեցման հիմքերի, ժամկետների և գործընթացի հստակ նկարագրությունը,
20) համագործակցության կարգում և պայմաններում հստակ սահմանում, թե կողմերի միջև անհամաձայնությունների դեպքում որ երկրի օրենսդրությունն է գերակա,
21) ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն, որը բնորոշում է Արտասահմանյան համակարգի առանձնահատկությունը կամ միմյանց միջև համագործակցության յուրահատկությունները և հնարավորություն տալիս գնահատելու հնարավոր ռիսկերը:

Հավելված 6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԴՐԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Արտասահմանյան համակարգի օպերատորի վերաբերյալ տեղեկատվություն.

1.1. Արտասահմանյան համակարգի անվանումը _____

1.2. Արտասահմանյան համակարգի օպերատորի անվանումը_____

1.3. Արտասահմանյան համակարգի օպերատորի գտնվելու վայրը/հասցեն_____

1.4. Արտասահմանյան համակարգի օպերատորի գրանցման ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

1.5. Արտասահմանյան համակարգի օպերատորի տեսակը՝ որպես կազմակերպություն.

1) ֆինանսական _____,
(նշել տեսակը)

3) այլ _____:
(նշել)

1.6. Արտասահմանյան համակարգի օպերատորի գործունեությունը կարգավորող/վերահսկող մարմինը _____

1.7. Արտասահմանյան համակարգի օպերատորի ռեզիդենտության երկրի օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություն մատուցելու իրավական հիմքը/հիմքերը.

1) Լիցենզիա_____,

2) Թույլտվություն_____,

3) այլ _____:
(նշել)

2. Արտասահմանյան համակարգի օպերատորի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն.

2.1. Արտասահմանյան համակարգի օպերատորի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձ-մասնակիցների վերաբերյալ տվյալներ.

Իրավաբանական անձի անվանումը		Գտնվելու վայրը/հասցեն		Գրանցման ամսաթիվը (վայրը, համարը) (օր/ամիս/տարի)		Մասնակցության չափը (%)
1.						
2.						

2.2. Արտասահմանյան համակարգի օպերատորի սեփականատեր հանդիսացող Ֆիզիկական անձ-մասնակիցների վերաբերյալ տվյալներ

Անուն, Ազգանուն		Բնակության վայրը/հասցեն		Անձնագրի համարը		Մասնակցության չափը (%)
1.						
2.						

3. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ.

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

3.1. Արտասահմանյան համակարգի օպերատորի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ

Կազմակերպության անվանումը		Գտնվելու վայրը/հասցեն		Փոխկապակցվածության տեսակը
1.				
2.				

3.2. Արտասահմանյան համակարգի օպերատորի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալներ.

Անուն, Ազգանուն		Բնակության վայրը/հասցեն		Անձնագրի համարը		Փոխկապակցվածության տեսակը
1.						
2.						

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

4. Տեղեկություններ այլ փոխկապակցված Համակարգերի վերաբերյալ.

Համակարգի անվանումը		Համակարգի օպերատորի անվանումը		Համակարգի օպերատորի գտնվելու վայրը/հասցեն		Փոխկապակցվածության տեսակը
1.						
2.						

5. Արդյո՞ք Արտասահմանյան համակարգի օպերատորի մոտ պահպանված են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերից բխող անհրաժեշտ պահանջների կիրառությունը: **«Այո» «Ոչ»**

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

6. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն.

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկանալուց հետո առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանյան համակարգի օպերատորի գործադիր տնօրեն՝

_____

(անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել արտասահմանյան այն վճարահաշվարկային համակարգերում Հայաստանի Հանրապետության բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասնակցության թույլտվության տրամադրման գործընթացը, որոնց միջոցով իրականացվում է վճարային գործիքով (վճարային քարտ, էլեկտրոնային փող և այլ) վճարումների ընդունում և կատարում,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 41-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն կանոնակարգը չի տարածվում Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայությունը վճարահաշվարկային համակարգերի օպերատորների համագործակցությամբ իրականացնելու արդյունքում ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգի այն մասնակիցների վրա, որոնք հայաստանյան վճարահաշվարկային համակարգի և Համակարգի օպերատորի միջև կնքված պայմանագրի հիման վրա ստացել են Համակարգով ծառայություններ մատուցելու իրավասություն:»,

2) Կանոնակարգի 5-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգեր՝ Համակարգի օպերատորի հետ համագործակցող արտասահմանյան այն վճարահաշվարկային համակարգերը, որոնց միջոցով Հայաս-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. ապրիլի 27-ին (ՀՀԳՏ, 07.05.2021):

տանյան մասնակիցը ստանում է իրավասություն՝ մատուցելու սույն Կանոնակարգով տրված թույլտվությամբ սահմանված ծառայություններ:»,

3) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 5-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերը,

4) Կանոնակարգի 10-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրի պատճենը կամ կնքվելիք պայմանագրի նախագիծը: Այն դեպքում, երբ Հայաստանյան մասնակցի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացվել է Համակարգի օպերատորի հետ կնքվող պայմանագրի նախագիծը, ապա Կենտրոնական բանկի կողմից համակարգում մասնակցության թույլտվության տրամադրման դեպքում՝ այդ թույլտվությունը ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը երկու ամսվա ընթացքում Հայաստանյան մասնակիցը Կենտրոնական բանկ է ներկայացնում ստորագրված պայմանագրի պատճենը: Սույն ենթակետում նշված վերջնաժամկետում ստորագրված պայմանագրի պատճենը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում՝ տրամադրված թույլտվությունը համարվում է ուժը կորցրած: Այն դեպքում, երբ Հայաստանյան մասնակիցը Համակարգին մասնակցում է Գործակալի միջոցով (անուղղակի եղանակով), ապա հղում տալ այն փաստաթղթին (օրինակ՝ պայմանագիր) կամ իրավական ակտին (օրինակ՝ համակարգի կանոն)՝ համաձայն որի Գործակալն իրավասու է պայմանագիր կնքել Հայաստանյան մասնակցի հետ, ինչպես նաև Գործակալին նման իրավասություն տվող պայմանագրի պատճենը,»,

5) Կանոնակարգի Հավելված 2-ում «Համակարգում Հայաստանյան մասնակցի կողմից մատուցվող ծառայությունների տեսակը/տեսակները՝ տարանջատված հետևյալ կերպ.» բառերից հետո «ա» և «բ» պարբերություններն ուժը կորցրած ճանաչել,

6) Կանոնակարգի Հավելված 4-ի 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Համակարգի գործունեության նպատակը (վճարային քարտերով, էլեկտրոնային փողերով և այլ միջոցներով գործարքների կատարման ապահովում),»,

7) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի Հավելված 4-ի 1-ին կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերությունը,

8) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի Հավելված 5-ի 1-ին կետի 3-րդ ենթակետը,

9) Կանոնակարգի Հավելված 5-ի 1-ին կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) Համապատասխան հարցման դեպքում համակարգի օպերատորի միջոցով մատուցված ծառայության մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ ստանալու Հայաստանյան մասնակցի իրավասությունը (սահմանված է արդյոք դրույթ, համաձայն որի համակարգի օպերատորը պարտավորվում է հայաստանյան մասնակցի հարցման դեպքում նրան տրամադրել իր միջոցով մատուցված ծառայության մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման վերաբերյալ տվյալներ):»,

10) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի Հավելված 7-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

30 ապրիլի 2021 թ., N 54-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել արտասահմանյան այն վճարահաշվարկային համակարգերում Հայաստանի Հանրապետության բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու դեպքերը, որոնց միջոցով իրականացվում է վճարային գործիքով (վճարային քարտ, էլեկտրոնային փող և այլ) վճարումների ընդունում և կատարում,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 342-Ն որոշմամբ հաստատված Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
30 ապրիլի 2021 թ., Ն 55-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. ապրիլի 27-ին (ՀՀԳՏ, 07.05.2021):

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2021 թվականի ապրիլի 27-ի
թիվ 55-Ն որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2006 թվականի հուլիսի 4-ի
թիվ 342-Ն որոշման

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ (ԿԱՄ) ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը, և (կամ) վճարունակությունը վտանգող դեպքերը՝ կապված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում հայաստանյան մասնակիցների մասնակցության հետ:

2. Սույն Ուղեցույցի համաձայն՝ հայաստանյան մասնակիցներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և այն կազմակերպությունները, որոնք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրավասու են մատուցելու վճարահաշվարկային ծառայություններ, և որոնք դիմել են Կենտրոնական բանկ՝ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու համար (այսուհետ՝ Հայաստանյան մասնակից):

3. Սույն ուղեցույցը չի տարածվում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայությունը արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի օպերատորների համագործակցությամբ իրականացվելու արդյունքում ծագած հարաբերությունների վրա:

4. Օրենքի և սույն ուղեցույցի 1-ին կետի կիրառման նպատակով սահմանվում է, որ Հայաստանյան մասնակցի նկատմամբ վերահսկողության իրականացման, կամ Հայաստանյան մասնակցին արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրման, կամ Համակարգի գործունեության կանոններում փոփոխություններ տեղի ունենալու վերաբերյալ Հայաստանյան մասնակցի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու, կամ Կենտրոնական բանկի կողմից այլ կերպ տեղեկություններ ձեռքբերելու արդյունքում՝ սույն ուղեցույցի 5-րդ կետում նշված հիմքերից (դեպքերից) որևէ մեկի բացահայտման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել Հայաստանյան մասնակցի մասնակցությունը արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում, կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել իր կողմից տրված մասնակցության թույլտվությունը:

5. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում Հայաստանյան մասնակցի մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ)

իրացվելիությունը, և (կամ) վճարունակությունը կարող են վտանգվել հետևյալ հիմքերի (պայմանների) առկայության դեպքում.

1) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի (այսուհետ՝ Օպերատոր) գործունեությունը կարգավորվում է այն երկրի օրենսդրությամբ, որը լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք է.
2) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորը կամ նրա սեփականատերերից որևէ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում,
3) Օպերատորը Հայաստանի Հանրապետությունում ծառայություններ է մատուցելու (մատուցում է) միայն մեկ Հայաստանյան մասնակցի միջոցով կամ Օպերատորը այլ երկրների համեմատությամբ անհավասար պայմաններ է սահմանում (ստեղծում) համակարգին Հայաստանյան մասնակիցների մասնակցության համար, կամ Օպերատորը մասնակցության անհավասար պայմաններ է սահմանում տարբեր հայաստանյան մասնակիցների համար, կամ Օպերատորի վարքագիծը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Սույն ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն հայցող կամ համակարգին մասնակցող Հայաստանյան մասնակիցը կամ համակարգի Օպերատորը կարող է ներկայացնել համապատասխան հիմնավորում սույն ենթակետով սահմանված հիմքերի առկայության անխուսափելիության կամ անհրաժեշտության վերաբերյալ: Այդ հիմնավորումները Կենտրոնական բանկի կողմից ընդունվելու դեպքում սույն ենթակետով նախատեսված հիմքերը չեն համարվի արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում Հայաստանյան մասնակցի մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությանը և (կամ) իրացվելիությանը, և (կամ) վճարունակությանը վտանգող հիմքեր.
4) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի Օպերատորի կողմից ընդունված համակարգի գործունեության կանոններում և(կամ) Հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև կնքված պայմանագրում և(կամ) այլ փաստաթղթում, որով կարգավորվում են Հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև հարաբերությունները.
   ա. սահմանված է Օպերատորի իրավասությունը զրկելու Հայաստանյան մասնակցին արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցությունից, և միաժամանակ սահմանված չեն զրկելու պայմանները (պատճառները, հիմքերը) և ընթացակարգերը (այդ թվում՝ տեղեկացման), կամ դրանք սահմանված են ոչ հստակ (կարող են ոչ միանշանակորեն մեկնաբանվել), կամ
   բ. Հայաստանյան մասնակցին արգելվում է այլ նմանատիպ վճարահաշվարկային համակարգերում մասնակցությունը, կամ
   գ. սահմանված չեն իրացվելիության, վարկային, հաշվարկային կամ գործառնական ռիսկերի զսպման, սահմանափակման մեխանիզմներ, որոնց բացակայության կամ անբավարարության հետևանքով հայաստանյան մասնակիցը կարող է կրել ֆինանսական կորուստներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ հայաստանյան ֆինանսական շուկայի այլ մասնակիցների վրա, կամ կարող է վարկաբեկել նրա բարի համբավը,

դ. սահմանված են վճարահաշվարկային համակարգում մասնակցությունից զրկելու ծանուցման մեկ ամսից պակաս կամ միակողմանիորեն պայմանագիրը լուծելու հիմքեր (պայմաններ), բացառությամբ հետևյալ դեպքերի.

դ1. Հայաստանյան մասնակցի կողմից իր պարտավորությունների չկատարումը, կամ

դ2. Օպերատորի երկրի իրավասու մարմնի կողմից այնպիսի որոշման ընդունումը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավորեցնում կամ որևէ այլ կերպ պարտադրում է Օպերատորին մեկամսյա ժամկետից շուտ Հայաստանյան մասնակցին զրկել մասնակցությունից, կամ

դ3. Հայաստանյան մասնակցի 10 %-ից ավելի ձայնի իրավունք ունեցող սեփականատերերի (մասնակիցների) փոփոխությունը, կամ

դ4. Հայաստանյան մասնակցին անվճարունակ կամ սնանկ ճանաչելու հայցով դատարան դիմելը, կամ ֆինանսական գործունեություն իրականացնելու լիցենզիայից (թույլտվությունից) զրկելը:

6. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի կամ հաշվարկային բանկի գործունեության դադարեցման կամ դրանց երկրի իրավասու մարմնի կողմից ժամանակավոր ադմինիստրացիայի, կառավարչի կամ նման այլ մարմնի նշանակման դեպքերում, Հայաստանյան մասնակցի տվյալ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում հետագա մասնակցության հարցը քննարկվում է Կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանյան մասնակցի ֆինանսական վիճակի կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը, և (կամ) վճարունակությունը վտանգվելու տեսանկյունից:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով նվազեցնել հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի օպերատորների կողմից իրենց համակարգերում առավել բարենպաստ պայմաններ ունենալու հավանականությունը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, 6-րդ և 7-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի ««Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը հաստատելու մասին»» թիվ 295-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 5-րդ կետի 12-րդ ենթակետում «Ներպետական» բառը փոխարինել «Ներհանրապետական» բառով,
2) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-րդ կետով.

«25.1 Համակարգի կանոններով, ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերով և Օպերատորի հետ հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով Համակարգի օպերատորի համար չեն կարող սահմանվել ծառայությունների մատուցման առավել բարենպաստ պայմաններ, քան համակարգի մյուս մասնակիցների համար:»,

3) Կանոնակարգի 33-րդ կետի 2-րդ ենթակետի «համակարգային» բառը փոխարինել «հանրային» բառով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. ապրիլի 27-ին (ՀՀԳՏ, 07.05.2021):

բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 223-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 154-Ն որոշման 4-րդ կետի «Բաժին 3-ով սահմանված» բառերը փոխարինել «Գլուխ 5-ով, Գլուխ 6-ով և Գլուխ 7-ով սահմանված» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
30 ապրիլի 2021 թ., Ն 56-Ն

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2021)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 50
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 54
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 73
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 74
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 84
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից փնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 103
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 115
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 117
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
